



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվարի 2023 թվականի N 205

### ՀՄԱՅԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### 1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

#### 2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4 թիվ 38 շենքի հարավարևելյան մասում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2023 թվականի հունվարի 10-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Վարչական վարույթի լսումներին ներկայացել է Հմայակ Բադալյանը (հիմք՝ LO107369497AM) և հայնտնել է որ իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ իր սեփականություն հանդիսացող հողամասում:

#### 3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ

հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անգգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով::

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Հմայակ Բադալյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:



2. Հմայակ Բադալյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 03  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 206

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՆՐՔԱՆՑՔ 4 ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նաթելա Ալբերտի Վարդանյանի 17.01.2023 թվականի թիվ 675 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27122012-06-0057 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /73126/, 10.01.2023 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 29 վկայագիրը /նոտարական կողմ: 763-20221113-84-6441710/, 13.01.2023 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-13012023-06-0008 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Մարգարյան փողոցի նրբանցք 4 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Մարգարյան փողոց, 1-ին նրբանցք, 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
Ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 207

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ 3 ՓԱԿ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտիրոս Անդրանիկի Մինասյանի 2701.2023թվականի թիվ 1423 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1877269 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/75361/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Զ Անդրանիկի 3 փակ թիվ 7 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Կամոյի փողոց, 34/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 208

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑ 43  
ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԳԵՎ ՌԱՖԻԿԻ ՓԱՓԱԽՉՅԱՆԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ  
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պարզև Ռաֆիկի Փափախյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման թիվ 10082022-06-0049 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, հողամասի բաժանման սխեման, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 21-րդ փողոց 43 հասցեում գտնվող Պարզև Ռաֆիկի Փափախյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասը՝ համաձայն ԱՐՍԵՆ ՌՈՒԴԻԿԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հատակագծերի:

2. Վանաձոր Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 21-րդ փողոց 43 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.

ա. 0.047455 հա մակերեսով գույքի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 21-րդ փողոց, 43/1 հողամաս,

բ. 0.047583 հա մակերեսով գույքի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 21-րդ փողոց, 43 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 209

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ  
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՆՇԱՆԻ  
ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ  
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Նշանի Գասպարյանի (ծնված՝ 28.01.1983թ.) դիմումը, 05.10.2022թ. տրված թիվ 4501 (նոտարական ակտի կոդ: 843-20220930-84-6311767) և թիվ 4502 (նոտարական ակտի կոդ: 843-20220930-84-6311845) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, 05.02.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.01.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-30/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 30.01.2023թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20237CDGND), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 472.19քմ մակերեսներով հողամասը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960-1985թթ.-ին:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Աշոտ Նշանի Գասպարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 472.19քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Աշոտ Նշանի Գասպարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեի 472.19քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված



հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Սայաթ-Նովա փողոց, թիվ 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 210

«ՊԼՈՒՏՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՊԼՈՒՏՈՆ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Պապանյանի 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 01/1735 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. թիվ 114 հասցեում գործող «ՊԼՈՒՏՈՆ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Պապանյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Բաղրամյան պող. թիվ 114 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 211

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐՈՐՅԱՆ ՓԱՅԼԱԿԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՄԽԻԹԱՐ ՍԵՐՈՐՅԱՆ ՓԱՅԼԱԿԻ» 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 01/1696 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 121/18 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՄԽԻԹԱՐ ՍԵՐՈՐՅԱՆ ՓԱՅԼԱԿԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Նարեկացի փող. թիվ 4դ հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 212

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ»-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ»-ի 2023 թվականի փետրվարի 00-ի թիվ 01/1737 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Բաղրամյան փող. թիվ 45 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ»-ի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Բաղրամյան փող. թիվ 45 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 213

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ» 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 01/1734 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Նարեկացի փող. թիվ 37/14-1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Նարեկացի փող. թիվ 37/14-1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 214

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆԱՀԻՏ ԱԴԱՄՅԱՆ ԿՈԼՅԱՅԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՆԱՀԻՏ ԱԴԱՄՅԱՆ ԿՈԼՅԱՅԻ» 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 01/1732 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փող. թիվ 9/38 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԱՆԱՀԻՏ ԱԴԱՄՅԱՆ ԿՈԼՅԱՅԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Համբարձումյան փող. թիվ 9/38 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵԾՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 215

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ի 2023 թվականի փետրվարի 03-ի թիվ 01/1771 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Նարեկացի փող. թիվ 29/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Նարեկացի փող. թիվ 29/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք.Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 216

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի տնօրեն Արմինե Մելքոնյանի 2023 թվականի փետրվարի 01-ի թիվ 01/1678 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Երևան քաղաքի Արամի փող. թիվ 3 և 5 հասցեում գործող «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի տնօրեն Արմինե Մելքոնյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 217

«ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՎԱԶԴ ԵՏՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Ծատինյանի 2023 թվականի փետրվարի 03-ի թիվ 01/1769 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փող. թիվ 28/17 հասցեում գործող «ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Ծատինյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 52 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 218

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԿԱՐԻՆԵ ԲՈՅԱԶՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԻՆԵ ԲՈՅԱԶՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 01/1733 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Ջաքարյան փող. թիվ 1-16/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԻՆԵ ԲՈՅԱԶՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Ջաքարյան փող. թիվ 1-16/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 219

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
692 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանվել Մացակի Մատինյանի (ծնված՝ 1961թ.) լիազորված անձ Սամվել Հենրիկի Քալաշյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 629 որոշումը, 17.08.2021թ. 61 ԱԱ 8002238 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 3070 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 843-20210910-64-5377048), ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 09.11.2022 թվականի թիվ Կ-09112022-06-0024 որոշումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 9 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Մանվել Մացակի Մատինյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 692 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում «256.1քմ» բառերը փոխարինել «247.09քմ» բառերով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 692 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 220

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 17 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 880  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մայիսի 2019 թվականի թիվ 880 որոշումը, 24.11.2022 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24112022-06-0010 որոշումը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված նոր տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մայիսի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 58-1/1 խանութի հարավային մասում ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, շինություններն օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 880 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «Մել և Միլ» ՍՊԸ բառերը փոխարինել «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ բառերով:
2. Որոշման հողամասի հատակագիծը փոխարինել «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված նոր հողամասի հատակագծով:
3. Որոշման 3-րդ կետում «0.001538հա (15.38քմ) հողամասի» բառերը փոխարինել «0.002956հա (29.56քմ) հողամասի» բառերով:
4. Որոշման 6-րդ կետում «ք. Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 58-1/2 խանութ» բառերը փոխարինել «Վանաձոր Վանաձոր ք., Ս. Լազյան փողոց, 43/1 խանութ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 221

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈԴՈՑ ԹԻՎ 6Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԵՂԻԿԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռազմիկի Եղիկյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2059036 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 15 ապրիլի 2021թ. թիվ 600-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Փոխել Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 6ա հասցեում գտնվող Արմեն Ռազմիկի Եղիկյանին սեփականության իրավունքով պատկանող մասնաշենքի 44.23քմ ներքին մակերեսով երկրորդ հարկի գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի նշանակության շինություն:

2. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 6ա հասցեում գտնվող մասնաշենքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 6/2 մասնաշենք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 222

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ, 92-93  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԱՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ  
ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Գարեգինի Սաղաթելյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20012023-06-0080 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Տարանջատել Վանաձոր Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց 1 շենք, 92-93 հասցեում գտնվող Արման Գարեգինի Սաղաթելյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հատակագծերի:

2. Վանաձոր Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց 1 շենք, 92-93 հասցեում գտնվող տարանջատված գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 40.3քմ մակերեսով բնակարանի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 1 շենք, 92 բնակարան:

բ) 55.5քմ մակերեսով բնակարանի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 1 շենք, 93 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 223

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,  
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ  
ԱՐՏՅՈՒՄ ՄԱՐԱՏԻ ԶԱՂԱԳԱԿԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Մարատի Զաղացականյանի 12.07.2022 թվականի թիվ 7264 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/71367/, Վանաձոր համայնքի անվանը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102012-06-0276 վկայականը, ղեկավարելով ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տերյան փողոց 4-9 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվանը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102012-06-0276 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Արտյոմ Մարատի Զաղացականյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արտյոմ Մարատի Զաղացականյանին հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 24 (քսանչորս) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Վանաձոր քաղաքի Տերյան փողոց թիվ 4-9 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վ. Տերյան փողոց, 4/9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 224

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՒԴՅԱԿՈՎ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ  
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՄՈ ԿՈԼՅԱՅԻ ԱՆՏԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կամո Կոլյայի Անտինյանի լիազորված անձ Համլետ Պարույրի Կարապետյանի դիմումը, 17.12.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 23.12.2021թ. ՀՀ արդարադատության նախարարության «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտարի (նոտարական ակտի կոդ: 775-20211222-215-5604085) թիվ 4207 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 26.02.2021թ. տրված թիվ 552 (նոտարական ակտի կոդ: 775-20210226-90-4957396) լիազորագիրը, 23.12.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4209 (նոտարական ակտի կոդ: 775-20211213-84-5580800) և թիվ 4208 (նոտարական ակտի կոդ: 775-20211213-84-5580651) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 18.05.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20223J5ZKR), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.09.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-148/22 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խուդյակով փողոց թիվ 10 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 399.0քմ և կից 50.4քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1990թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 449.4քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չափապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**



1. Ճանաչել Կամո Կոլյայի Անտինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խուդյակով փողոց թիվ 10 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 399.0քմ մակերեսով հողամասին կից 50.4քմ մակերեսով հողամասերի նկատմամբ:

2. Ճանաչել Կամո Կոլյայի Անտինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խուդյակով փողոց թիվ 10 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 449.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Մարշալ Խուդյակովի փողոց թիվ 10/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 225

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 06  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 226

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԽ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ  
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԳԵՅ  
ՌՌԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերգեյ Ռոբերտի Հարությունյանի (ծնված՝ 26.07.1965թ.) լիազորված անձ Սարգիս Էդիսոնի Մելքոնյանի դիմումը, 18.08.2021թ. տրված լիազորագրի ուկրաիններենից հայերեն թիվ 3183 (նոտարական ակտի կոդ: 763-20210906-67-5362186) թարգմանությունը, 22.09.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 17.05.2010թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 2080 վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 18.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-110/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.05.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022OTDPEN) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի ՄԽ. Հերացու փողոցի թիվ 37 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 595.5քմ օրինական և կից 10.5 քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1947-1990թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1212քմ, որը Սերգեյ և Սամվել Ռոբերտի Հարությունյաններին է պատկանում ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով: Սերգեյ Ռոբերտի Հարությունյանի բաժնեմասը կազմում է 606.0քմ (1212.0:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

